

ՄՇԱԿ

ՀԱՅԿԵԱՐԹԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորութիւնը բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՎՈՒՆ 1899 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մ» շաբաթը տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բ ժ ժ յ ն ո ղ ն երը պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Ն ո ռ ո յ ա յ ի բ ժ ժ յ ն ո ղ ն երը՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ս կ ա ս տ ա ն ի բ ժ ժ յ ն ո ղ ն երը՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՍԱՆԸ (Բաղրամյան և Բարձրակայան փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրելու հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ

Այսպէս լինելու կարիք. — ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մատենադարան. Նամակ Բաղրամյան. Նամակ Միմյան. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտասահման լուրեր. — ՀԵՐՈՒԳՐԱՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Անդրկովկասեան Մանուֆակտուրային ընկերութեան աւելում:

ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔ

Այս օրերս Դանիայում ընդունվեց օրէնսդրական ձեռնարկ մի նախագիծ, որ նպատակ ունի օգնել միտքի զարգացմանը և ձեռք բերելու հոգիային սեփական ու թիւնն էր: Ամբողջ հինգ տարի, սկսած 1894 թուից, այդ նախագիծը քաջաշնչում էր այս ու այն կողմ, շատ անգամ մերժվում ստորին կամ բարձր պարլամենտի կողմից, և միայն այժմ նա ստացաւ վերջնական հաստատութիւն և:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳՐԱԿՎԱՍԵԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՐԱԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

I

Սրտանց չնորհաւորելով Մանուֆակտուրային, Ներքին գործերին, Աւետիսեանի և Ոսկանեանի առեւտրական տների նոր հիմնած «Անդրկովկասեան Մանուֆակտուրային ընկերութեան» հաստատութիւնը՝ կուզէինք մի քանի խօսք նուիրել այդ ձեռնարկութեան, որ առանձին նշանակութիւն կունենայ մեր երկրի տնտեսական կենտրոնում:

«Անդրկովկասեան Մանուֆակտուրային ընկերութիւնը», որի հիմնական դրամագումարը մէկ ու կէս միլիոն ռուբլի է՝ պէտք է հիմնը բաժնեկցի գործառնական գործարան, մի բան, որի կարիքը մեր երկրի համար գնալով ոչ միայն զգալի, այլ և անհրաժեշտ է դառնում: Նրա կապը, որ միլիոնաւոր ժողովուրդ ունեցող Կովկասը չունի ոչ մի հատ մանուֆակտուրային գործարան, բացի Զիթախանի կտաւի գործարանից, որը շատ քիչ և աննշան բաւականութիւն է տալիս մեր ժողովրդի պահանջներին. ժողովուրդը չէ կարող այդպիսի ստանալ հազուատի համար գործունեութեան, որ պարտաւոր է զբաղվել միայն իր սեփական աշխատանքով, ունի 25 տարեկան հասակ և 50 տարեց աւելի ծեր չէ իրաւունք ունի յուսալ, որ պետութիւնը նրան կաջակցի գնելու հոգ իր համար: Հոգի կտորը պէտք է լինի ոչ պակաս քան 110 և ոչ աւելի քան 450 ալր: Պետութիւնը տալիս է փողոցներում հողի գին $\frac{9}{10}$ մասը, իսկ $\frac{1}{10}$ մասը պէտք է հողը բանաւորը իր սեփական խնայողութիւններէն: Պետութիւնը իր տուած փողը մասնաւոր յետ է վերցնում վաթսուս տարվայ ընթացքում, հաշվելով տոկոսը 3 և $\frac{3}{2}$, ոչ աւելի:

Փողը ինչ ուրիշ ձեռքով մեզանում ևս ծաղկ է հողի պակասութեան դէմ կռիւ: Եւ պահանջը: Բազմաթիւ գիւղացիներ ստիպված են դիմել կողմնակի աշխատանքի, որպէս զի լրացնեն այն պակասը, որ առաջանում է իրանց տնտեսութեան մէջ հողի պակասութեան պատճառով: Գիւղացիները չէ կարող այդպիսի ստանալ հազուատի համար գործունեութեան և ստիպված է դիմել Մոսկովայի և Լոգդի գործարաններին, անելով ահագին ծախսեր, տալով աւելորդ միջնորդներին վատաւ, ծանապարհի վարձ, աւելորդ ծախսակիւն տոկոս և այլն: Բացի այդ՝ բաւական էր ունենալ մի երկու գործարան՝ որ տնտեսել կարելի լինէր այն ահագին ծախսերը, որոնք լինում են մեր երկրի բաժնեկի Ռուսաստան արտահանելու պատճառով:

Այս անգամ մենք կը պարզենք երկու հարց, որոնք կապված են «Անդրկովկասեան Մանուֆակտուրային ընկերութեան» գործունեութեան հետ, թէ նրա շահն և թէ նրա բարոյական պարտքը տնտեսական մեր ժողովրդի բարօրութեան նկատմամբ: Անցնենք այդ հարցերին զատ զատ: Նախ՝ որոնք պիտի հիմնվի ապագայ գործարանը, որպէս զի կրկնակի նպատակի ծառայէ, և երկրորդ՝ ինչ զի պիտի բաժնէ նա առաջին նախագիծն ընդհանուր գործում մեր ժողովրդի մէջ:

II

Նոր ընկերութեան անունից երևում է, որ հիմնադրները իրանց գործը չեն սահմանափակելու մի տեղում, այլ ի նկատի ունեն ամբողջ Անդրկովկասը. սակայն մենք մասնաւոր կերպով լսած լինելով, որ ապագայ գործարանը հիմնվելու է Թիֆլիսում՝ հարց ենք տալիս, ինչ շահեր

ցնենքին հողի նոր տարածութիւններ են հարկաւոր՝ կարիք չը գգաւա համար: Իսկ աւելորդ, նոյն-իսկ աննշան մնացած հողի մեծ տարածութիւններ մեր երկրում դեռ սպասում են իրանց մշակողներին և կարող էին աշխատանքի մեծ ասպարէզ տալ կարօտ գիւղացիներին: Այսպիսի հողեր կան Անդրկովկասի բոլոր մասերում և պատկանում են թէ՛ մասնաւոր սեփականատէրերի և թէ՛ պետութեան:

Անկասկած, շատ համակրելի և միմիայնակ երևոյթ պէտք է համարել, երբ հողը անցնում է այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք պէտք է սեփական իրանց ոյժերով մշակեն հողը և բարելաւեն նրան, առանց յանձնելու վարձու մարդկանց, որոնք չեն կարող սիրել և արգասանող դարձնել այն հողը, որ նրանց չէ պատկանում:

Ռուսաստանի ներքին նահանգներում վարդուց այդ նպատակով գործում է գիւղացիական բանակ կոչված հաստատութիւնը, որը նոյնպէս օժանդակում է գիւղացիներին՝ մեր նրանց ցանկանում են հողեր գնել իրեն սեփականութիւն: Այդպիսի մի հաստատութեան օգնութիւնը շատ ժամանակակից կը լինէր և Անդրկովկասի համար, որտեղ սկսվել է հողեր ծախելու մի գեղ մեր երկրի մէջ չը տեսնված տեղը:

Կարուածական բանակները արդէն գրաւ են վերցրել Անդրկովկասի մասնաւոր հողերի մեծագոյն մասը և իւրաքանչիւր տարի ծախում են կարուածներ աճեւորով: Հողի գինը դեռ բարձր չէ, նա փողը ինչ աւելացել է նախկին գների հետ համեմատած. բայց ընդհանրապէս վերցրած՝ նա դեռ շատ ցածր է, իսկ ապագայում, և այն էլ ամենամօտ ապագայում, պէտք է սաստիկ բարձրանայ: Այն, ինչ որ այժմ թանգ է համարվում՝ իսկապէս շատ էժան է: Ուստի ցանկալի է, որ մեր գիւղացիներին կարողութիւն տրվի գիւղացիները պայմաններով ձեռք բերել հողի կտորներ և այդպիսով թէ՛ ապահովել նրանց աշխատանքի մշտական աղբիւրով, թէ՛ ազատել հողերը միջնորդների և վաշխառուների ձեռքը ընկնելուց և թէ՛ արգասանող ու բերրի դարձնել ընդարձակ տարածութիւններ, որոնք ներկայումս մնում են անմշակ և ապարդիւն:

Արդեօք մի այդպիսի գեր չէ՞ր կարող ստանալ նաև Գիւղատնտեսական բանկը, որ մի քանի տարեց ի վեր գոյութիւն ունի մեր երկրում: Իսկ ամենա-

մեծ օգնութիւնը կարող էր, անկասկած, ընծայել պետական գիւղական բանկը՝ եթէ նա վճռէր իր գործողութիւնները տարածել և մեր երկրի գիւղական շրջանում:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Անցնալով մենք մասնաւոր այն նշանակելի փաստը, որ Կ. Պոլսի հայերը սկսել են հասկանալ ֆրանսիական սիստեմի փեսաները: Մինչև վերջին տարիները ոչ միայն թիւրքաց մայրաքաղաքը, այլ և համարեա Ասիայի ամբողջ արևմտեան մասը գտնվում էին ֆրանկների ազդեցութեան տակ. «ֆրանկ»-դա մի գիւղական անուն էր, որ ցոյց էր տալիս իմաստութիւն, խելք, հանձար, գիտութիւն: Բայց դարավերջի ծրարներն իր դէկադէնտ հանրապետութիւնը չը կարողացաւ պահպանել և այդ դարաւոր ծառանդութիւնը. Արևելքում երևան եկաւ եւրոպական կուլտուրայի մի այլ ինքնատիպ, զուտ ներկայացուցիչ, որ ազդեցութիւն, վարկ, առեւտրական և տնտեսական բարձր հեղինակութիւն սկսեց ձեռք բերել: Կա Գերմանիան է: Ն. Կ. Պոլսի հայերի մէջ բնականաբար հարց պիտի առաջանար. — Փրանսիան թէ՛ Գերմանիան: Գերմանական կրթութեան գործնական առաւելութիւնները արդէն գնահատել է «Սուրհանդակ» լրագիրը, որ քարոզում է, թէ պէտք է վերակազմել ազգային կրթութիւնը գերմանական սիստեմով: Անշուշտ այս հոսանքի համար նպաստաւոր հող է պատրաստում և այն հանդամանքը, որ վերջերում թիւրքացայ երիտասարդութեան համար լոյսի և գիտութեան օջախը այլ ևս միայն Պարսկը չէ, այլ և Գերմանիան: Առաջ տանելով իր բնական ուղղութիւնը՝ նոյն «Սուրհանդակը» այժմ հարց է դնում. «Փրանսիան թէ՛ գերմանիան»: Եւ, ի հարկէ, պատասխանում է, որ գերմանիան էլ թիւրքացայերի մէջ պիտի ստանայ քաղաքացիական կատարեալ իրաւունք: Բերվում է մի հանգամանք, որ, մեր կարծիքով, խոշոր նշանակութիւն ունի Կ. Պոլսի գրագէտները, ինչպէս յայտնի է, չարապանց շատ սիրահարված են իրանց լեզուային հարստութեան, գրական կրթութեան, ճաշակի նրբութեան վրա, և ամեն անգամ, կամենալով բարձրագույն առեւտրային ցոյց տալ իրանց անհոն բարձրութիւնը՝ մի առանձին անապարդութեամբ յիշատակում են, թէ արևմտեան հայ ֆրանսիական ազդեցութեան պտուղն է, թէ նա անվել և մեծացել է ֆրանսիական գրականութեան հիւնքով և այ-

Այնքանապատկառ լրացող Թիֆլիսի հետ և Կարսի վրայով Թիւրքիայի հետ, միւս կողմից էլ Նախիջևանի վրայով Պարսկաստանի հետ, ուրեմն միանգամայն կը զիւրացնին ապրանքների թէ՛ Թիֆլիս տեղափոխելու գործը և թէ արտահանելը դէպի Թիւրքիա և Պարսկաստան, ուր ուսուսական ապրանքների պահանջը գնալով մեծանում է: Ի նկատի պէտք է ունենալ և այն, որ նոյն-իսկ Մոսկովայի յայտնի գործարանները մեծ մասամբ նոյնքան հեռու են ընկած Մոսկովայից՝ որպէս Ներսէս Թիֆլիսցի, Կովկասի այդ առեւտրական կենտրոնից: Ուրեմն այս հեռավորութիւնը աննշան համարելով, Ներսէսի միւս յարմարութիւնների համեմատութեամբ, մանաւանդ Պարսկաստանի, մեծ քանակութեամբ առեւտրական ապրանքներ սպառող այդ երկրի վերաբերմամբ, որ աւելի մօտ է Ներսէսին՝ մինչև անգամ զարմանալի է թվում մեզ, թէ ինչու հիմնադրները Թիֆլիսի վրա են կանգ առել, եթէ ի նկատի ունենանք նաև այն, որ Ներսէսից Թիֆլիս բաժնեկի տեղափոխութիւնը անհամեմատ աւելի թանկ կարժէ՝ քան պատրաստի ապրանքի տեղափոխութիւնը:

Եւ իսկապէս մենք նպատակ չենք գտնում այդ որոշման մէջ: Ներսէսը շուտ ուշ իր վրա պիտի դարձնէ օտարների ուշադրութիւնը: Հէնց որ երկրամուտը ստույգ կը հնչէ՝ Արարատեան դաշտում կը յայտնվի օտար կապիտալիստը և

